№ 69 Ապրիլ 21 (Մայիսի 3) 1881 Ապրիլ 21 (Մայիսի 3) № 69

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։
Բաժանորդ գրվում են միմիայն խմբագրատան մէջ։
[illegible]
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
[illegible]
[illegible] 2 կոպէկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թարգմանական ընկերութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Порядокъ» լրագրի թղթակցութիւն.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Դաւիթ բէկ.

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ինչպէս հայերիս ամեն մի ձեռնարկութիւն, Հայոց գրքերի հրատարակութեան Թիֆլիսի ընկերութիւնն էլ շատ աջող կերպով չէ կարող կատարել իր գործը։ Հայերի մէջ պահանջ չը կայ դէպի ընթերցանութիւնը։ Բաց արէք հայերիս մէջ մի գինեվաճառանոց,— և դուք մեծ շահ կանենաք։ Բայց հիմնեցէք մի լրագիր, հրատարակեցէք մի գիրք, բաց արէք մի ընթերցարան,— և դուք մեծ վնասներ կը կրէք։

Հայի համար ուտել, խմել, շատ կերպով ապրել, քէֆ անել,—պահանջ է։ Բայց կարդալ, դաստիարակութիւն տալ, մտաւոր կեանքով ապրել,—պահանջ չէ։

Հասկանալի է որ Թիֆլիսի Թարգմանական ընկերութիւնը նոյնպէս վնասներ պէտք է կրէ, որպէս մեր լրագիրների և ամսագիրների հրատարակիչները։ Ապրիլի 14-ին ընկերութեան կայացած ընդհանուր ժողովի նիստից երևաց, որ ընկերութեան հրատարակված գրքերը գրեթէ չեն տարածվում մեր հասարակութեան մէջ և գրքերի մեծ մասի հրատարակվելուց ընկերութիւնը նիւթական վնաս է կրում։

Ընկատած այդ տխուր երևոյթի գլխաւոր պատճառը, ինչպէս ասեցինք, այն է որ հայերիս մէջ դեռ ևս զարգացած չէ ընթերցանութեան պահանջը։ Բայց զուգէ մասամբ ինքն ընկերութիւնն էլ մեղաւոր է, ինչպէս իրաւացի կերպով նկատեց ժողովի մէջ պ. Յ. Տէր-Յովհաննիսեանց։ Հասկանալով որ հայոց հասարակութեան համար ընթերցանութիւնը դեռ ևս կենսական պահանջ չէ, ընկերութիւնը պէտք է աշխատէր հրատարակել այնպիսի գրքեր, որոնք անպատճառ կառնվէին հայերից։

Հայը ամեն բանի վրա նայում է երկու տեսակէտից. կեանքի մէջ անմիջական գործադրութեան և զուարճութեան տեսակէտից։ Հայը չէ ընդունում որ կարելի լինէր գիրք, ամսագիր, լրագիր կարդալ մտաւորապէս զարգանալու, կեանքի համար պատրաստվելու համար։ Ոչ, նա ընթերցանութիւնից պահանջում է կամ անմիջական գործադրութիւն կեանքի մէջ, կամ զուարճութիւն։

Այդ է պատճառը որ մեր մէջ ամենահեշտ կերպով տարածվող գրքերը միայն երկու տեսակ կարող են լինել. դպրոցների համար դասագրքեր և երգարաններ։ Առաջինը անմիջապէս գործադրութիւն է գտնում դպրոցների դաստիարակութեան ժամանակ, երկրորդը կարելի է երգել քէֆ անելու ժամանակ.... Այս հայի հայեացքը գրականութեան վրա։ Պարզ է որ գրականութեան վրա այդ տեսակ հայեացք ունեցող ժողովրդի մէջ անհնարին է տարածել մի որ և է Մօրիս Բլոկի տնտեսական գիրքը, կամ առողջապահական խորհրդներով մի գրվածք։ Այդ տեսակ գրքերի տպագրութեան ծախսը երբէք չի ծածկվի։ Այն ինչ երգարանների և դասագրքերի տպագրութեան ծախսը միշտ ծածկվում է և այդ գրքերը մնում ունենում են միշտ մի քանի տպագրութիւններ։ Թէև պ. Տէր-Յովհաննիսեանց հաստատում է մեզ որ մեր բազմաթիւ դպրոցներից դուրս եկած ուսումնաւարտները պահանջ ունեն ընթերցանութեան մէջ, ուրեմն պէտք է հրատարակել ընթերցանութեան գրքեր,— բայց մենք փորձից տեսնում ենք որ այդ այդպէս չէ. մեր դպրոցները բոլորովին չեն զարգացնում սէր դէպի ընթերցանութիւն և մեր ուսումնաւարտները նոյնքան քիչ պահանջ ունեն դէպի ընթերցանութիւնը, որքան և մեր անուս և անգրագէտ մանրավաճառները, որոնք ոչ մի դպրոցում չեն եղել։

Իսկ մանկական ընթերցանութեան գրքերը լաւ են տարածվում, բայց մենք նրանց վրա նայում ենք դարձեալ ինչպէս դասագրքերի վրա, որովհետև մանուկները պէտք է մի բան կարդան, քանի որ դպրոցումն են։

Ընդհանրապէս մեր Թարգմանական ընկերութիւնը պէտք է հաշուի այն մտքի հետ, որ նա էլ, մեր ուրիշ ձեռնարկութիւնների պէս, պէտք է դեֆիցիտ ունենայ, մի քանի գրքերից միայն, որոնք հայի համար անմիջապէս գրական օգուտ են ներկայացնում, շահ ստանայ, իսկ ընդհանրապէս մտաւոր և անհրաժեշտ գրքերի ծախսը չը կարողանայ ծածկել, այդ յանձն առնի տարածել ժողովրդի մէջ այդ տեսակ հրատարակութիւնները նիւթական վնաս կրելով։

Գ. Ա.

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

Դ.

Սիւնեաց աշխարհի Սիսիան *) գաւառի Ու[illegible] կոչված դաշտավայրի վրա երևում էին մի քանի սպիտակ վրաններ։ Այդ խուլ, մարդկային բնակութիւնից հեռու [illegible] թափառում էին Կարա-չորլու կոչված թիւրք ցեղի [illegible] խաշնարածները։ [illegible]

[illegible]

[illegible]

—Ո՞վ, Սամսոն, ասաց նա [illegible]

[illegible]

[illegible]

---

*) Սիսական գաւառ.